

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-15

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ Ու ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

«23» հունվարի 2020թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Սամվել Չախյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեզույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը՝ ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ **155 998 900 (հարյուր հիսունհինգ միլիոն ինն հարյուր ինսուտուր հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները*, *դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում

#### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1.ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

**2.1.1.** Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

**2.1.2.** ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

**2.1.3.** չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

**2.1.4.** առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

**2.1.4.1.** Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

**2.1.4.2.** Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

**2.1.4.3.** իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

**2.1.5.** Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## **2.2.** Կազմակերպությունն իրավունք ունի՝

**2.2.1.** ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

**2.2.2.** Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

**2.2.3.** ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## **2.3.** ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

**2.3.1.** Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

**2.3.2** ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

**2.3.3.** ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## **2.4.** Կազմակերպությունը պարտավոր է՝

**2.4.1.** Ծրագիրը կատարել անձամբ,

**2.4.2.** Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

**2.4.3.** Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

- 2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5. աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,
- 2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7. Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,
- 2.4.8. իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,
- 2.4.9. Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,
- 2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
- 2.4.12. Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:
- 2.4.13. ավելացված արժեքի հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

### 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է՝ **155 998 900 (հարյուր հիսունհինգ միլիոն ինն հարյուր ինսուսուր իսագար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար**

### 4. Մոնիթորինգ

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

**4.3.** Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

**4.4.** Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

## **5. Վճարման կարգը և ժամկետները**

**5.1.** ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2.** ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## **6. Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## **7. Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## **8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն

իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն

իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)  
  


ՀՀ ԳԱԱ Ն. Բունիաթյանի անվան  
կենսաքիմիայի ինստիտուտ

ք. Երևան, Պ.Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794

Երևանի թիվ 1 ՏԳԲ

h/h 900018005463

Տևօրեն՝ Սամվել Զախլյան

  


Ծրագրի գիտական ղեկավար՝



(Սամվել Զախլյան)

Հավելված 1  
«23» հունվարի 2020 թ.  
N Կ-15 պայմանագրի

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում  
այուրափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման  
գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ,  
մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկերի ախտահարումներ) պաթոգենեզի  
և էյրոհորոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների  
հայտնաբերումը՝ ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և  
ի դեմս ՀՀ ԳԱԱ Ն. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Սամվել  
Չախիյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «23 հունվարի  
2020 թ. N Կ-15 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 155 998 900  
(հարյուր հիսունհինգ միլիոն ինն հարյուր ինսունութ հազար ինն հարյուր) ՀՀ դրամ  
գումար

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և  
վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
ք. Երևան, Մարշալ Բաղդասյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրում)



Ծրագրի գլխավոր

ՀՀ ԳԱԱ Ն. Բունիաթյանի անվան  
կենսաքիմիայի ինստիտուտ  
ք. Երևան, Պ. Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794

Երևանի թիվ 1 ՏԳԲ

h/h 900018005463

Տնօրեն՝ Սամվել Չախիյան

(ստորագրություն)



(Սամվել Չախիյան)

**ԱՌԱՋԱՐԴԱՆՔ**

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկերի ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Ուսումնասիրել բնական և սինթետիկ կենսաբանական ակտիվ տարբեր միացությունների մասնակցությունը և դերը օրգանիզմի նյութափոխանակության գործընթացում նեյրոդեգեներատիվ, չարորակ և շաքարախտային հիվանդությունների կանխարգելման և հնարավոր բուժման նպատակով:

Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Հետազոտվելու է պրոլիներով հարուստ պոլիպեպտիդ գալարմինի ազդեցությունը վարակիչ, ուռուցքային և արյունաբանական հիվանդությունների բուժման համար:

Իրականացվելու են տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում գալարմինի և ածանցյալների ազդեցության մեխանիզմների բացահայտման աշխատանքներ վիրտուալ տիրույթում:

Ժամանակակից քիմիոթերապիայի ամենակարևոր ուղղություններից մեկը ապոպտոզի միջոցով չարորակ քաղցկեղային բջիջների վերացման ուղիների մշտական որոնումն է, որոնցից մեկն էլ գալարմինի ազդեցության ուսումնասիրումն է: Էրլիխի ասցիտային կարցինոմայով վարակված մկներից ստացված քաղցկեղային բջիջների վրա

Իրականացվելու է մարդու լյարդից և գլխուղեղից անջատած ֆոսֆորիբոզիլ պիրոֆոսֆատ սինթազ-1 և քսանտինօքսիդազի արգելակիչների և խթանիչների, որպես նախադեղերի, դերի հետազոտումը փորձարարական գլխուղեղի կաթվածի և գլխոմայի պայմաններում:

Նախատեսվում է մշակել կենսատեխնոլոգիական մեթոդ բջջաթաղանթներից սուպերօքսիդ գոյացնող կոմպլեքսի անջատման, մաքրման, Օ<sub>2</sub>-երի գոյացման մեխանիզմի որոշման և տարբեր կենսահամակարգերի վրա այդ կոմպլեքսի ազդեցության մեխանիզմների ու արդյունավետության գնահատման համար:

Դիպեպտիդիլպեպտիդազ IV-ը (ԴՊՊ IV), ադենոզինդեզամինազ (ԱԴԱ) գլուտամինազ և ԳԱԿԹ-տրանսամինազ ֆերմենտները կարևորվում են իմունային համակարգի զարգացման, ինչպես նաև բորբոքային պրոցեսների ընթացքում և դրանց ակտիվությունների կարգավորումը հեռանկարային է որոշ հիվանդությունների բուժման/կանխարգելման համար: Պեպտիդիլարգինինդեհիմինազները (ՊԱԴ) սպիտակուցներում և պեպտիդներում արգինինի մնացորդների գուանիդինային խումբը ձևափոխում են ուրեիդո խմբի՝ առաջացնելով ցիտրուլին ամինաթթու: Ցիտրուլինացումը դերակատարություն ունի բորբոքումների, մասնավորապես, աուտոիմունային հիվանդություն ռևմատոիդ արթրիտի (ՌԱ) պաթոգենեզում, ուստի նախատեսվում է ՌԱ հիվանդների

սինովիալ հեղուկներում բացահայտել ՑԱԴԱ-ի ակտիվության բարձրացման կենսաքիմիական պատճառը:

4.Աշխատանքի բովանդակությունը 2020թ. նախատեսվում է շարունակել կենսաբանորեն ակտիվ տարբեր միացությունների ազդեցությունը օրգանիզմում ընթացող տարբեր գործընթացներում:

Կատարվելու են տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում գալարմինի և ածանցյալների ազդեցության մեխանիզմների բացահայտման աշխատանքներ վիրտուալ տիրույթում (ուսումնասիրվելու է գալարմինի և ածանցյալների հնարավոր փոխազդեցությունը այն ռեցեպտորների հետ, որոնք կապ ունեն մինչ այժմ հայտնաբերված կենսաբանական ակտիվությունների հետ): Հետազոտվելու է բորբոքային պրոցեսներին առնչվող տարբեր թուլ-նման TLR1/2, TLR3, TLR4, TLR5, TLR6, TLR7, TLR8, TLR9 ռեցեպտորների խնամակցությունը գալարմինի նկատմամբ:

Արյան մակարդման համակարգի ակտիվացման ժամանակ ակտիվանում է կոագուլյացիոն կասկադի վերջին ֆերմենտը՝ ֆակտոր XIII-ը (FXIII), որը պատասխանատու է ֆիբրինային մակարդուկի կայունացման համար: Լինելով բազմաֆունկցիոնալ ֆերմենտ FXIII-ը ազդում է էնդոթելային բջիջների վրա նպաստելով անգիոգենեզի և նեովասկուլյացիայի գործընթացներին, ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ նպաստում է բակտերիաների իմոբիլիզացմանը և մահվանը, երակային խոցերի և միոկարդի վնասվածքների վերականգնմանը և այլն: Նախատեսվում է ուսումնասիրել պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի հնարավոր ազդեցությունը FXIII-ի ակտիվության վրա:

Նախատեսվում է *in vivo* պայմաններում ուսումնասիրել գալարմինի տարբեր չափաբաժինների (1μg/100g, 5μg/100g, 10μg/100g) ազդեցությունը Էրլիխի ասցիտային կարցինոմայով (ԷԱԿ) վարակված մկներից ստացված քաղցկեղային բջիջների վրա տարբեր ժամանակահատվածներում (7-րդ և 11-րդ օրերում) ԷԱԿ-ով վարակված մկների ասցիտային հեղուկում: Պլանավորվում է նաև իմունաֆերմենտային անալիզի (ELISA) կիրառմամբ ու գալարմինի հակաշիճուկի օգտագործմամբ, ԷԱԿ մոդելով մկների արյան շիճուկում հայտնաբերել և քանակապես որոշել գալարմինը, որը նախադրյալներ կստեղծի հետագայում կլինիկական պրակտիկայում մարդկանց տարբեր տիպի քաղցկեղների ախտորոշման համար:

Իրականացվելու է ֆոսֆորիբոզիլ պիրոֆոսֆատ սինթազ-1 (ՖՐՊՍ-1) անջատումը և լյարդից, գլխուղեղից և ուսումնասիրումը՝ կենսաքիմիական հատկությունների համեմատություն, մասնավորապես՝ Vmax, Km որոշում: Հետազոտվելու է ՖՐՊՍ-1-ի արգելակիչների և խթանիչների, որպես նախադեղերի, դերը փորձարարական գլխուղեղի կաթվածի և գլխումայի պայմաններում: Նախատեսվում է մարդու լյարդից և գլխուղեղից անջատած քսանտինօքսիդազի (ՔՕ) ուսումնասիրումը և դրա հակամարմինների ստացումը, ՖՐՊՍ-1-ի և ՔՕ-ի ակտիվության որոշումը գլխումայով հիվանդ մարդկանց արյան մեջ և տվյալների համադրումը կախված տարիքից, սեռից, զուգորդող հիվանդությունների առկայությունից, կիրառված դեղերից: Արյան պրոտեազների հանդեպ կայուն արբումինային նանոմասնիկների ստացումը և վերջիններիս հազեցումը և/կամ կապումը ՖՐՊՍ-1-ի արգելակիչների և խթանիչների հետ:

Նախատեսվում է մշակել կենսատեխնոլոգիական մեթոդ բջջաթաղանթներից սուպերօքսիդ գոյացնող կոմպլեքսի անջատման, մաքրման, O<sub>2</sub>-երի գոյացման մեխանիզմի որոշման և տարբեր կենսահամակարգերի վրա այդ կոմպլեքսի ազդեցության



մեխանիզմների (հակաուռուցքային, հակամանրէային ազդեցություն, դրական դեր իմունային անբավարարվածության ժամանակ, ԴՆԹ-ի փոփոխություններ և այլն) ու արդյունավետության գնահատման համար: Այս հետազոտությունները ունենաալու են շարունակական բնույթ:

Դիպեպտիդիլպեպտիդազ IV-ը (ԴՊՊ IV), ադենոզինդեզամինազ (ԱԴԱ) գլուտամինազ և ԳԱԿԹ-տրանսամինազ ֆերմենտները կարևորվում են իմունային համակարգի զարգացման, ինչպես նաև բորբոքային պրոցեսների ընթացքում և դրանց ակտիվությունների կարգավորումը հեռանկարային է որոշ հիվանդությունների բուժման/կանխարգելման համար: Պեպտիդիլարգինինդեհիմինազները (ՊԱԴ) սպիտակուցներում և պեպտիդներում արգինինի մնացորդների գուանիդինային խումբը ձևափոխում են ուրեիդո խմբի՝ առաջացնելով ցիտրուլին ամինաթթու: Արդյունքում սպիտակուցը կորցնում է դրական լիցքը, փոխվում է իզոէլեկտրիկ կետը, կոնֆորմացիան, այլ սպիտակուցների հետ փոխազդեցությունը, իոնական և ջրածնային կապեր ստեղծելու ունակությունը: Ցիտրուլինացումը կարևորվում է բորբոքումների, մասնավորապես, աուտոիմունային հիվանդություն ռևմատոիդ արթրիտի (ՌԱ) պաթոգենեզում: Նախատեսվում է ՌԱ հիվանդների սինովիալ հեղուկներում բացահայտել ՑԱԴԱ-ի ակտիվության բարձրացման կենսաքիմիական պատճառը, որի համար անհրաժեշտ է՝

- իրականացնել ցուլի թոքից անջատած նատիվ (ՑԱԴԱ)-ի *in vitro* ցիտրուլինացում ՊԱԴ-ով;
- համեմատել սինովիալ հեղուկից անջատած և *in vitro* ցիտրուլինացված ԱԴԱ-ի կատալիտիկ հատկությունները;
- հետազոտել ցիտրուլինացված և չցիտրուլինացված ՑԱԴԱ-ի *in vitro* փոխազդեցությունը ԴՊՊIV-ի հետ:

Շաքարախտի բուժումը պահանջում է կոմպլեքսային մոտեցում (հակաբորբոքային, իմունաձևափոխիչ, հակաօքսիդանտային և β-բջիջները վերականգնող): ԳԱԿԹ-ը, դրա հոմոլոգ β-ալանինը և դրանց յուրացնող ֆերմենտ ԳԱԿԹ-տրանսամինազի արգելակիչ էթանոլամին-Օ-սուլֆատը համատեղ կանխարգելում են քիմիական շաքարախտածինների հիպերգլիկեմիայի առաջացումը, որից էլնելով նախատեսվում է շաքարախտի քիմիական մոդելի վրա ուսումնասիրել ԳԱԿԹ-ի, β-ալանինի և էթանոլամին-Օ-սուլֆատի համատեղ օգտագործումը հիվանդության բուժման նպատակով:

Հղիների մոտ հաճախ հանդիպող շաքարախտի և սնկային հիվանդությունների հետազոտման նպատակով շարունակվելու է նմուշների հավաքման գործընթացը հանրապետության հիվանդանոցներում: Նախատեսվում է որոշել առողջ և հիվանդ հղիների վուլվովագինալ սնկային վարակի տարածվածությունը, շիճուկում հետազոտել ԱԴԱ1 և ԱԴԱ2 իզոֆերմենտների ակտիվությունները: Նախատեսվում է մարդու արյան պլազմայից ստանալ IgG-ի հակամարմիններ մաքուր ԱԴԱ2 ֆերմենտի *in vitro* հետազոտման համար:

Շարունակվելու են հեմորֆինների հակաշաքարախտային ազդեցության ուսումնասիրությունները նոր կոմպլեքսային հակաշաքարախտային դեղամիջոցների ստեղծման նպատակով, որոնց բաղադրիչներից մեկը կլինի հենց հեմորֆինը: LVV-հեմորֆին-3-ը, բացի դիաբետիկ առնետների պլազմայում գլյուկոզ նվազեցնող ազդեցությունից, կարող է խթանել նաև ինսուլինի սինթեզը ենթաստամոքսային գեղձում և վերջինիս մակարդակի աճը պլազմայում: Նույնատիպ հակաշաքարախտային հատկությամբ է օժտված յուրոկորտին-3-ը (Uro3), որը կորտիկոտրոպին ռիլիզինգ

գործոնի՝ CRF-ի ռեցեպտոր-2-ի (CRF-R2) ամենազգայուն ազոնիստն է: Քանի որ LVV-հեմորֆին-7-ը դրսևորում է սերտ ֆունկցիոնալ կապ CRF-ի երկու ռեցեպտորների հետ, ապա նպատակահարմար ենք գտնում օգտագործել LVV-հեմորֆին-3-ը և Uro3-ը նոր համալիր դեղամիջոցի ստեղծմանն ուղղված հետազոտություններում: Հեմորֆինները բացահայտվել են որպես դիպեպտիդիլ պեպտիդազ 4-ի անտազոնիստներ, որոնք ներկայումս կիրառվում են որպես նոր սերնդի հակաշաքարախտային դեղամիջոցներ, նպատակ ունենք հետազոտել նաև վերջիններիս հետ հեմորֆինի համատեղ հակաշաքարախտային ազդեցությունը:

Հայաստանում հանքարդյունաբերության ինտենսիվ զարգացումը, ինչպես նաև գյուղատնտեսության շարունակական քիմիզացիան առաջացնում են լուրջ խնդիրներ շրջակա միջավայրի համար՝ բերելով հողի և ջրի աղտոտմանը ինչպես ծանր մետաղներով, այնպես էլ թունաքիմիկատներով: Հատկապես վտանգավոր է ծանր մետաղներով աղտոտումը, քանի որ նրանք չեն քայքայվում և պահպանվում են էկոհամակարգում: Այս պայմաններում աղտոտվածության մոնիթորինգը հանդիսանում է կարևորագույն խնդիր: Ստանդարտ անալիտիկ մեթոդները, ինչպիսիք են ատոմային ադոպրեցիոն սպեկտրոմետրիան, մաս սպեկտրոմետրիան, բարձր արդյունավետության քրոմատոգրաֆիան ապահովում են լավ արդյունքներ, սակայն նրանք ունեն լուրջ թերություններ, դա անալիզի բարձր արժեքն է և որակյալ կադրերի անհրաժեշտությունը: Որպես այլընտրանքային մոտեցում կարող են հանդիսանալ կենսասենսորները, որոնց դերում տվյալ դեպքում կհանդիսանան ֆերմենտները: Կախված է մետաղի քանակից մի շարք ֆերմենտներ մետաղների ներկայությամբ կամ ակտիվանում են կամ արգելակվում: Չափելով այդ ակտիվությունները կարելի գնահատել այս կամ այն մետաղի առկայությունը: Մյուս կողմից հայտնի են ֆերմենտներ, որոնց ակտիվությունը կտրուկ արգելակվում է մի շարք թունաքիմիկատների չնչին քանակների դեպքում և այս ֆերմենտները կարող են օգտագործվել թունաքիմիկատների քանակը գնահատելու համար: Նախատեսվում է որպես ֆերմենտներ օգտագործել ուրեազը, հիմնային ֆոսֆատազը, պերօքսիդազը և ացետիլխոլին էստերազը, որոնք կկիրառվեն երկու տիպի ֆորմատներում՝ թղթային կենսասենսորների (կիսաքանակական), և փորձանոթային (քանակական) տարբերակով:

Ուսումնասիրվելու են 1-ին տիպի շաքարային դիաբետի (S1ՇԴ) ախտորոշման, բուժման և վերահսկման մեխանիզմները կախված տարիքից, սեռից և բուժման տևողությունից (ինսուլինով և ինսուլին+մետֆորմինով), ինչպես նաև դիաբետային կետոացիդոզի ժամանակ Մուրացան հիվանդանոցային համալիրի էնդոկրինոլոգիայի բաժանմունքի հետ համատեղ: Նոր ախտորոշված և երկարաժամկետ՝ մեկ տարուց ավելի բուժում ստացած S1ՇԴ-ով արական և իգական սեռի հիվանդների երեխաների և երիտասարդ չափահասների ենթախմբերում որոշվելու են գլիկեմիկ հսկողության աստիճանը՝ արյան գլիկոզիլացված հեմոգլոբինի՝ HbA1c, մակարդակը և դրա հետ փոխկապված նիտրերգիկ համակարգի ակտիվությունը արյան պլազմայում և լեյկոցիտների միտոքոնդրիումներում ու բջջապլազմայում՝ ազոտի օքսիդի սինթազի (NOS) ընդհանուր ակտիվությանը և NOS-ի արգասիքների՝ ազոտի օքսիդի կայուն միացությունների և ցիտրուլինի մակարդակների որոշմամբ; ինչպես նաև արգինազի ակտիվությունը և նյութափոխանակության արգասիքների՝ օրնիտինի ու միզանյութի մակարդակները: Իմունային պատասխանում ներգրավված L-արգինինի նյութափոխանակության ուղիների՝ NO-սինթազի և արգինազի հետազոտումը կօգնի ընդլայնել պատկերացումները S1ՇԴ-ի ախտաբանության մասին, և նոր թերապևտիկ

թիրախների որոնմանը, ինչպես նաև մշակելու մատչելի չափորոշիչներ SICT-ի առաջացման, ընթացքի և բուժման համար:

Ֆոտոդինամիկ թերապիայում՝ ՖԴԹ-ում արյան ֆոտոսենսիբիլիզատորների հիմնական տեղափոխիչներն են սպիտակուցները և պրոտեոլիպիդները, որոնց չափերը հաճախ համեմատելի են նանոմասնիկների չափերին: Արյան սպիտակուցներից է ցերուլոպլազմինը (ՑՊ)՝ պղինձ պարունակող պլազմայի սպիտակուցը, որը կարևոր դեր է խաղում պղնձի և երկաթի նյութափոխանակության մեջ, պրոօքսիդիչ/հակաօքսիդիչ ռեակցիաների մեխանիզմներում, ինչպես նաև քաղցկեղի թերապիայում՝ ապլաստիկ անեմիայի, սրտանոթային հիվանդությունների, այրվածքների, վարակիչ-սեպտիկ բարդությունների բուժման նպատակով: Ուսումնասիրվելու է կատիոնային պորֆիրինների և մետաղապորֆիրինների, ինչպես նաև լայն հայտնի և կլինիկայում օգտագործվող ֆոտոսենսիբիլիզատորներ չեզոք Al-ֆտալոցիանինի («Ֆոտոսենս») և անիոնային պորֆիրին քլորին e6-ի հետ միացնելու դեպքում դրա հնարավոր օգտագործումը ՖԴԹ-ում:

Ուռուցքային հիվանդների կենսանյութի վրա (սիզմայաձև աղու աղենոկարցինոմա) կատարված մեր փորձերի արդյունքում հայտնաբերվել են տրանսլոկացիայի ենթարկված ոչ տիպիկ *E. coli*: Նախատեսվում է հետազոտել դրանց իմունաբանական և գենետիկական հատկանիշները՝ տրանսլոկացված *E. coli* շտամերի ադհեզիվության և նրանց պլազմիդների ու էպիսոմների ուսումնասիրման միջոցով:

Շարունակվելու են հետազոտությունները՝ պարզելու էլեկտրաբուժության ժամանակ ակտիվ դեր ունեցող էլեկտրաինդուկցված ազատ ռադիկալների ազդեցությունը լիպիդային երկշերտ թաղանթային կառույցներում մակաձվոդ օքսիդանտային պրոցեսների վրա, և որոշ նեյրոակտիվ միացությունների հավանական հակաօքսիդանտային ազդեցությունները այդ պրոցեսներում: Իրականացվելու են նաև հյուսվածքներում և լիպոսոմներում ՈՒՄ ճառագայթների և էլեկտրական հոսանքի ազդեցության ժամանակ դիտվող թաղանթային լիպիդների գերօքսիդային օքսիդացման պրոցեսների պարզաբանմանը ուղղված ուսումնասիրությունները:

5.Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը Հրապարակված հոդվածներ, տարեկան հաշվետվություններ, հանրապետական և միջազգային գիտաժողովների զեկույցներ:

Տնօրեն



(Մամվել Չախյան)

Ծրագրի գիտական ղեկավար

(Մամվել Չախյան)

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի ներդրումնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	127500.0	25500.0	31875.0	31875.0	38250.0
2	տնտեսական և այլ ծախսեր	28498.9	5699.8	7124.7	7124.7	8549.7
Ընդամենը		155998.9	31199.8	38999.7	38999.7	46799.7

Տնօրեն՝

  
 (ստորագրություն)

(Մամվել Չախյան)

Գլխավոր հաշվապահ

  
 (ստորագրություն)

(Սերինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար



(Մամվել Չախյան)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում կուրթափոխանակության, ստրեսի, արապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի ներդրումն ու մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ-ի (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	9510.3
	էլեկտրաէներգիայի ծառայություն	6500.0
	գազի ծառայություն	1500.0
	ջրամատակարարման ծառայություն	450.0
	կապի ծառայություն	720.0
	աղբահանություն	340.3
2	Գույք	1800.0
3	Սարքեր և սարքավորումներ	8132.6
4	Նյութեր	2500.0
5	Գործուղումներ	1500.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
8	Հրատարակման ծախսեր	56.0
	Այլ ծախսեր	5000.0
<b>Ընդամենը</b>		<b>28498.9</b>

Տնօրեն՝  (Սամվել Չախյան)

Գլխավոր հաշվապահ՝  (Սերինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝  (Սամվել Չախյան)



**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացում: Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների /սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկկերի ախտահարումներ/ պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը ծրագրի կատարողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Չախլյան Սամվել Գրիգորի	տնօրեն	կ.գ.դ.	350000
2	Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիկի	գիտքարտ. ավագ գիտաշխ.	կ.գ.թ.	185000
3	Բարսեղյան Սերինե Հրանտի	գլխ. հաշվապահ	-	250000
4	Ներսիսյան Ստեփան Կառլենի	փոխտնօրեն ընդհ. հարցերով, պարետ	-	220000
5	Ավագյան Լիլիթ Գագիկի	կադրերի ավագ տեսուչ	-	200000
6	Շահբազյան Գեղեցիկ Պուլբատի	հաշվապահ-գանձապահ	-	185000
7	Բարսեղյան Գոհար Ռոբերտի	հաշվապահի օգնական	-	50000
8	Չերքեզյան Քրիստինե Մարատի	իրավաբան, ռեֆերենտ	-	180000
9	Խալաթյան Ռոզա Արայիկի	մարքեթոլոգ	-	չվճարվ.արձակ
	<b>Նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժին</b>		-	
	Չախլյան Սամվել Գրիգորի	բաժնի վարիչ, գլխ. գիտաշխ., լաբ. վարիչ	կ.գ.դ.	230000
10	Ռաֆաելյան Նելլի Արտյոմի	ռեֆերենտ	-	89000
11	Դանիելյան Քրիստինե Էդգարի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	115000
12	Հարությունյան Ալիսա Պողոսի	ավագ լաբորանտ		92000
13	Բաբայան Լիդա Արայիկի	կրտսեր		46000

		գիտաշխատող		
14	Ալավերդյան Մանուշակ Արմենի <i>Անալիտիկ քրոմատոգրաֆիայի և մասսպեկտրալ հետազոտությունների լաբորատորիայի</i>	ավագ լաբորանտ		46000
15	Հովսեփյան Անիշկա Սերյոժայի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	30000
16	Համբարձումյան Արթուր Ալբերտի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	25000
17	Մաթևոսյան Մարգարիտա Բենիամինի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	45000
18	Հայրապետյան Գոհար Ալբերտի	կրտսեր գիտաշխատող	-	50000
19	Գալստյան Ռաֆայել Մասիսի	ինժեներ	-	67000
20	Ավետիսյան Համլետ Հովհաննեսի	ավագ լաբորանտ	-	92000
21	Բարսեղյան Կարեն Ռոբերտի	լաբորանտ	-	46000
	<i>Ներոսպեցիֆիկ սպիտակուցների լաբորատորիա</i>			
22	Պարոնյան Զոյա Խաչատուրի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
23	Գրիգորյան Լուսինե Ստյոպայի	կրտ. գիտաշխատող	-	89000
24	Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	89000
25	Ստեփանյան Հասմիկ Արամայիսի	գիտաշխատող	-	89000
	<i>Հիստոքիմիայի և ֆունկցիոնալ մորֆոլոգիայի լաբորատորիա</i>			
26	Սահակյան Ինեսա Կամոյի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
27	Աբրահամյան Սիլվա Սամսոնի	առաջ. գիտաշխատող	կ.գ.դ.	100000
28	Թումասյան Նարինե Վաղինակի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	95000
29	Քոչարյան Նունե Վլադիմիրի	գիտաշխատող	կ.գ.թ.	90000

	<b><i>Ակտիվ թթվածնի նյութափոխանակության լաբորատորիա</i></b>			
30	Սիմոնյան Ռուզան Մաքսիմի	լաբ. վարիչ, չ ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
31	Սիմոնյան Մաքսիմ Արշալույսի	առաջ. գիտաշխ	կ.գ.դ.	90000
32	Բաբայան Մադլենա Ալեքսեյի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	89000
33	Սիմոնյան Գեղամ Մաքսիմի <b><i>Մադամաքիմիայի լաբորատորիա</i></b>	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	46000
34	Մարգարյան Անահիտ Սամվելի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
35	Բադալյան Ռոզա Բարկենի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	45000
36	Գուրոզյան Մարիամ Միսակի	կրտսեր գիտաշխատող	-	120000
37	Սաքեյան Հռիփսիմե Դավթի <b><i>Ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիա</i></b>	ավագ լաբորանտ	-	չվճարվ. արձակ
38	Գևորգյան Գևորգ Արտաշեսի Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիգի	լաբ.վարիչ, գլխավոր գիտաշխ. ավագ գիտաշխատող	կ.գ.դ. կ.գ.թ.	150000 45000
39	Խաչատրյան Հրանուշ Ֆրունզիկի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
40	Կարապետյան Գոհար Ռուբենի	գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
41	Բարսեղյան Ջենմա Լիպարիտի	ավագ լաբորանտ	-	89000
42	Բարսեղյան Վահագն Հովհաննեսի	գիտաշխատող, պահեստապետ	կ.գ.թ.	185000
43	Գյուլխանդանյան Գրիգոր Վազգենի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	110000
44	Գևորգյան Ռուզաննա Գևորգի	կրտսեր գիտաշխատող	կ.գ.թ.	92000
45	Մարգարյան Հակոբ Հովհաննեսի	ինժեներ	-	45000
46	Հովհաննիսյան Մարգարիտա Ռոբերտի	կրտսեր գիտաշխատող	-	110000



47	Աղաբաբովա Ագնեսա	ավագ	կ.գ.թ.	115000
48	Աղայի	գիտաշխատող		
48	Մովսիսյան Նինա	ավագ	կ.գ.թ.	110000
	Հովհաննեսի	գիտաշխատող		
49	Ալչուջյան Նինա	ավագ	կ.գ.թ.	125000
	Խաչատուրի	գիտաշխատող		
50	Քնարյան Վարդուհի	ավագ	կ.գ.թ.	100000
	Հարությունի	գիտաշխատող		
51	Զաքոյան Աննա Արթուրի	կրտսեր	-	92000
		գիտաշխատող		
52	Մկրտչյան Լուսինե	ավագ լաբորանտ	-	92000
	Վազգենի			
53	Տեր-Գևորգյան Անահիտ	ավագ լաբորանտ		46000
	Գուրգենի			
	<b><i>Ադենիլ. միաց. նյութավորիս. լաբորատորիա</i></b>			
54	Անտոնյան Ալվարդ	լաբ. վարիչ, ավագ	կ.գ.թ.	130000
	Ադիբեկի	գիտաշխատող		
55	Մարդանյան Սոնա	առաջ. գիտաշխ	կ.գ.դ.	110000
	Սմբատի			
56	Սարգիսովա Ելիզավետա	ավագ	կ.գ.թ.	89000
	Գրիգորի	գիտաշխատող		
57	Շարոյան Սվետլանա	ավագ	կ.գ.թ.	89000
	Գարսևանի	գիտաշխատող		
	Հայրապետյան Հռիփսիկ	ավագ	կ.գ.թ.	30000
	Լյուդվիգի	գիտաշխատող		
58	Կարապետյան Լուիզա	կրտսեր	-	92000
	Գարեգինի	գիտաշխատող		
59	Սարգսյան Էլմիրա Յուրիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	92000
60	Հակոբյան Շողիկ Սարգսի	ավագ լաբորանտ	-	46000
61	Քամայան Ռոմիկ	առաջ. գիտաշխ	կ.գ.դ.	89000
	Գուրգենի			
62	Խաչատրյան Նարինե	կրտսեր	-	46000
	Խաչիկի	գիտաշխատող		
63	Խաչատրյան Հռիփսիմե	կրտսեր	-	92000
	Սահակի	գիտաշխատող		
64	Բաքարյան Անահիտ	կրտսեր	-	92000
	Կարենի	գիտաշխատող		
	<b><i>Նեյրոպեպտիդների կենսաքիմիայի լաբորատորիա</i></b>			
65	Բարխուդարյան Նինա	լաբ. վարիչ, առաջ.	կ.գ.թ.	171000
	Հայկազի	գիտաշխ		
66	Սարուխանյան Ֆլորա	ավագ	կ.գ.դ.	110000

	Պետրոսի	գիտաշխատող		
67	Զաքարյան Հերմինե	գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
68	Հունանյան Օվսաննա Վանիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	92000
69	Հովհաննիսյան Գայանե Անդրանիկի	կրտսեր գիտաշխատող	-	92000
	<b><i>Կենսաբժշկական հետազոտությունների լաբորատորիա</i></b>			
70	Սեֆերյան Թորգոմ Երվանդի	լաբ. վարիչ, առաջ. գիտաշխատող	կ.գ.թ.	130000
71	Հարությունյան Ժասմինա Էլկանի	գիտաշխատող	կ.գ.թ.	45000
72	Քուրուրտչյան Նոնա Սերգեյի	գիտաշխատող	-	45000
73	Գևորգյան Վահագն Սմբաթի	կրտսեր գիտաշխատող	-	92000
74	Հարոյան Աննա Ռաֆիկի	ավագ լաբորանտ		46000
75	Առաքելյան Լուսինե Ռաֆայելի	լաբորանտ	-	46000
	<b><i>Բժշկական կենսատեխնոլոգիայի լաբորատորիա</i></b>			
76	Գասպարյան Վարդան Կառլենի	լաբ. վարիչ, առաջ. գիտաշխ.	կ.գ.թ.	130000
77	Պողոսյան Գայանե Գեորգիի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	89000
78	Միքայելյան Մարիամ Վարդգեսի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	101000
79	Մարուխյան Սեդա Սամվելի	կրտսեր գիտաշխատող	-	92000
80	Հովհաննիսյան Վարդուհի Ալբերտի	կրտսեր գիտաշխատող	-	92000
81	Դավթյան Մարիա Պավելի	կրտսեր գիտաշխատող	-	89000
82	Գյուրջյան Քրիստինե Գառնիկի	կրտսեր գիտաշխատող	-	92000
83	Խչեյան Սոնա Արմենի	ավագ լաբորանտ		46000
	<b><i>Տեխնիկական կազմ</i></b>			
84	Ավետիսյան Կարեն Մանուկի	կենդանանոցի վարիչ	-	90000
85	Բաբաջանյան Վահե Ռուբենի	կենդանիներ խնամող	-	92000

86	Ռաֆաելյան Կարինե Արտյոմի	գրադարանի վարիչ	-	89000
87	Թանքարյան Հռիփսիմե Կարապետի	հավաքարար	-	134000
88	Մովսեսյան Մարինա Ռաֆայելի	հավաքարար	-	89000
89	Հովհաննիսյան Լիդիա Ալեքսանդրի	հավաքարար	-	89000
90	Բաղդադյան Աշոտ Ռազմիկի	խառատ	-	89000
91	Մարտիրոսյան Գագիկ Սեյրանի	վերելակի մեքենագետ	-	23000
92	Սաֆարյան Սիրարփի Վարդանի	կենդանանոցի բանվոր	-	138000
93	Բալայան Միսակ Արամայիսի	կրտսեր գիտաշխ., գազի տնտ. պատասխանատու	ք.գ.թ.	120000
94	Զաքարյան Արտաշես Կառլենի	ինժեներ, մատակարար	-	200000
95	Գալստյան Գալուստ Իլիչի	պահակ, բանվոր	-	165000
96	Հովհաննիսյան Էդուարդ Գրիշայի	պահակ, բանվոր	-	165000
97	Խաչատրյան Գարեգին Խաչատուրի	պահակ, բանվոր	-	165000
98	Անանյան Հարություն Նիկոլայի	պահակ, բանվոր		165000
99	Վանյան Կարապետ Վալիրիի Ընդամենը	այգեպան, բանվոր		165000 10006000

Կազմակերպության տնօրեն՝  (Ստորագրություն) (Մամվել Չախյան) (անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝  (Ստորագրություն) (Լիլիթ Ավագյան) (անուն ազգանուն)

Օրագրի գիտական ղեկավար՝  (Ստորագրություն) (Մամվել Չախյան) (անուն ազգանուն)



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ**

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Բոբբոքային պրոցեսների առնչվող տարբեր թուլ-նման TLR1/2, TLR3, TLR4, TLR5, TLR6, TLR7, TLR8, TLR9 հետ): Հետազոտվելու է ռեցեպտորների խնամակցությունը գալարմինի նկատմամբ:	Fmoc ամինաթթուների հենքի վրա սինթեզված գալարմինի ազդեցությունը հետազոտել տարբեր կենսաքիմիական համակարգերում:	Պեպտիդի սինթեզ և ազդեցության ուսումնասիրում սպեկտրաֆոտոմետրիկ և մասս սպեկտրային մոլեկուլային դոկինգի մեթոդներով	Քանակական տեղաշարժեր	1-ին եռամսյակ	22000.0
2.	Ապոպտոզի միջոցով չարորակ քաղցկեղային բջիջների վերացման նպատակով գալարմինի ազդեցության ուսումնասիրում Էրլիխի ասցիտային կարցինոմայով վարակված մկներից ստացված քաղցկեղային բջիջների վրա:	Ակնկալվում է Էրլիխի ասցիտային կարցինոմայի մոդել-ը վաղնեոնների մոտ հայտնա-բերել ԴՆԹ-ի կրկնապատկման (ռեպլիկացիայի) փուլի դանդաղեցում կամ ընդհատում առանց գալարմինի և գալարմինի ազդեցությամբ:	Մանրադիտակային հետազոտություններ Միկրոսկոպիա Գոնֆոկալ մանրադիտակ	Կառուցվածքային փոփոխությունների պատկերների ստացում		12500.8

3.	Մշակել կենսատեխնոլոգիական մեթոդ բջջաթաղանթներից սուպերօքսիդ գոյացնող կոմպլեքսի անջատման, մաքրման, O <sub>2</sub> -երի գոյացման մեխանիզմի որոշման և տարբեր կենսահամակարգերի վրա այդ կոմպլեքսի ազդեցության մեխանիզմների ու արդյունավետության գնահատման համար:	Սուպերօքսիդ-գեներացնող լիպոպրոտեինի (սուպրոլ) և Nox1+Nox2-ի գումարային ֆրակցիայի անջատման համալիր մեթոդի մշակում և դրա հետագա ներդրում կենսաբժշկության ու դեղագործության մեջ:	Սպեկտրասկոպիկ հետազոտություններ	Քաղցկեղի տոքսիկ ազդեցության մեղմում	2-րդ եռամսյակ	9000.0
4.	Շարունակվել հեմոքսինների հակաշաքարախտային ազդեցության ուսումնասիրությունը նոր կոմպլեքսային հակաշաքարախտային դեղամիջոցների ստեղծման նպատակով: Օգտագործել LVV-հեմոքսին-3-ը և Uro3-ը նոր համալիր դեղամիջոցի ստեղծմանն ուղղված հետազոտություններում:	Նախատեսվում է օգտագործել LVV-հեմոքսին-3-ը և Uro3-ը նոր համալիր դեղամիջոցի ստեղծմանն ուղղված հետազոտություններում	ELISA մեթոդի կիրառում Պրոտեոմե, գել-էլեկտրաֆորեզ Western Blot	Հեմոքսինները բացահայտվել են որպես դիպեպտիդիլ պեպտիդազ 4-ի անտագոնիստներ, որոնք ներկայումս կիրառում են որպես նոր սերնդի հակաշաքարախտային դեղամիջոցներ, նպատակ ունենք հետզոտել նաև վերջիններիս հետ հեմոքսինի համատեղ հակաշաքարախտային ազդեցությունը:	2-րդ եռամսյակ	13498.1
5.	Շաքարախտի քիմիական մոդելի վրա ուսումնասիրել ԳԱԿԹ-ի, β-ալանինի և էթանոլամին-Օ-սուլֆատի համատեղ օգտագործումը հիվանդության բուժման նպատակով:	Ուսումնասիրվելու են ԳԱԿԹ-ի, β-ալանինի և էթանոլամին-Օ-սուլֆատի համատեղ ազդեցությունը ինտակտ փորձարարական շաքարային դիաբետի մոդելի վրա	Ֆերմենտային ակտիվության որոշում	Մշակել և առաջարկել նոր մոտեցումներ շաքարային դիաբետի բուժման համար:	2-րդ եռամսյակ	12000.0
6.	ՌԱ հիվանդների սինովիալ հեղուկներում բացահայտել ՅԱԴԱ-ի ակտիվության բարձրացման կենսաքիմիական պատճառը:	Իրականացնել ցուլի թոքից անջատած նատիվ (ՅԱԴԱ)-ի <i>in vitro</i> ցիտրուլինացում ՊԱԴ-ով համեմատել սինովիալ հեղուկից անջատած և <i>in vitro</i> ցիտրուլինացված ԱԴԱ-ի կատալիտիկ հատկությունները և հետազոտել ցիտրուլինացված և չցիտրուլինացված ՅԱԴԱ-ի <i>in vitro</i> փոխազդեցությունը ԴՊՊIV-ի հետ	Ֆերմենտների անջատման մաքրման մեթոդներ, ակտիվության սպեկտրալ չափումներ	Պաթոլոգիաների կանխարգելման և բուժման հնարավոր շտկումներ	3-րդ եռամսյակ	15000.0
7.	ՌԻսումնասիրել պրոլինով	Արյան մակարդման համակարգի	Մակարդելիության	Գալարմինի	3-րդ եռամսյակ	13000.0

	<p>հարուստ պեպտիդ գալարմինի հնարավոր ազդեցությունը FXIII-ի ակտիվության վրա::</p>	<p>ակտիվացման ժամանակ ակտիվանում է կոագուլյացիոն կասկադի վերջին ֆերմենտը՝ ֆակտոր XIII-ը (FXIII), որը պատասխանատու է ֆիբրինային մակարդուկի կայունացման համար: Լինելով բազմաֆունկցիոնալ ֆերմենտ FXIII-ը ազդում է էնդոթելային բջիջների վրա նպաստելով անգիոզենեզի և նեովասկուլյացիայի գործընթացներին:</p>	<p>որոշման մեթոդներ</p>	<p>ազդեցությամբ մակարդելիության գործընթացում ակնկալվող փոփոխություններ</p>		
<p>8.</p>	<p>Հայտնի են ֆերմենտներ, որոնց ակտիվությունը կտրուկ արգելակվում է մի շարք թունաքիմիկատների չնչին քանակների դեպքում և այս ֆերմենտները կարող են օգտագործվել թունաքիմիկատների քանակը գնահատելու համար:</p>	<p>Նախատեսվում է որպես ֆերմենտներ օգտագործել ուրեազը, հիմնային ֆոսֆատազը, պերօքսիդազը և սցետիլխոլին էստերազը, որոնք կկիրառվեն երկու տիպի ֆորմատներում՝ թղթային կենսասեստորների (կիսաքանակական), և փորձանոթային (քանակական) տարբերակով:</p>	<p>Սպեկտրալ մեթոդներ</p>	<p>Ֆերմենտների օգտագործումը կարող է հանդիսանալ ախտորոշիչ միջոց տարբեր թունաքիմիկատները բացահայտելու համար:</p>	<p>3-րդ եռամսյակ</p>	<p>12000..</p>
<p>9.</p>	<p>Ուսումնասիրել կատիոնային պորֆիրինների և մետաղապորֆիրինների, ցերուլոպլազմինի, ինչպես նաև լայն հայտնի և կլինիկայում օգտագործվող ֆոտոսենսիբիլիզատորներ չեզոք Al-ֆտալոցիանինի (“Ֆոտոսենս”) և անիոնային պորֆիրին քլորին e6-ի հետ միացնելու դեպքում դրա հնարավոր օգտագործումը ՖԴԹ-ում:</p>	<p>Արյան սպիտակուցներից և ցերուլոպլազմինը (ՑՊ)՝ պղինձ պարունակող պլազմայի սպիտակուցը, որը կարևոր դեր է խաղում պղինձի և երկաթի նյութափոխանակության մեջ, պրոօքսիդիչ/հակաօքսիդիչ ռեակցիաների մեխանիզմներում, ինչպես նաև քաղցկեղի թերապիայում՝ ապլաստիկ անեմիայի, սրտանոթային հիվանդությունների, այրվածքների, վարակիչ-սեպտիկ բարդությունների բուժման նպատակով</p>	<p>Աբսորբցիոն և ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդներ</p>	<p>և Ակնկալվում են քաղցկեղի բուժման գործընթացի որոշակի շտկումներ</p>	<p>4-րդ եռամսյակ</p>	<p>20000.0</p>
<p>10.</p>	<p>Ուսումնասիրել 1-ին տիպի շաքարային դիաբետի (S1C7) ախտորոշման, բուժման և վերահսկման մեխանիզմները կախված տարիքից, սեռից և բուժման տևողությունից (ինսուլինով և ինսուլին+մետֆորմինով), ինչպես նաև դիաբետային կետոացիդոզի</p>	<p>Նոր ախտորոշված և երկարաժամկետ մեկ տարուց ավելի բուժում ստացած S1C7-ով արական և իգական սեռի հիվանդների երեխաների և երիտասարդ չափահասների մոտ որոշվելու են գլիկեմիկ հսկողության աստիճանը՝ արյան գլիկոզիլացված հե-</p>	<p>Սպեկտրալ մեթոդներ</p>	<p>Շաքարախտի բուժման գործընթացում հնարավոր շտկումներ</p>	<p>4-րդ եռամսյակ</p>	<p>15000.0</p>

	<p>Ժամանակ Մուրացան հիվանդանոցային համալիրի էնդոկրինոլոգիայի բաժանմունքի հետ համատեղ:</p>	<p>մոզլոբինի՝ HbA1c, մակարդակը և դրա հետ փոխկապված նիտրերգիկ համակարգի ակտիվությունը արյան պլազմայում և լեյկոցիտների</p>				
11.	<p>Հետազոտել ուռուցքային հիվանդանոցի կենսաանյութի վրա սիզմայաձևադու ադենոկարցինոմայի դեպքում տրանսլոկացիայի ենթարկված ոչ տիպիկ <i>E. Coli</i>-ի իմունաբանական և գենետիկական հատկանիշները՝ տրանսլոկացված <i>E. coli</i> շտամերի ադիեզիվության և նրանց պլազմիդների ու էպիսոմների ուսումնասիրման միջոցով:</p> <p>Պարզել էլեկտրաբուժության ժամանակ ակտիվ դեր ունեցող էլեկտրահնդուկցված ազատ ռադիկալների ազդեցությունը լիպիդային երկշերտ թաղանթային կառույցներում մակաձվոդ օքսիդանտային պրոցեսների վրա, և որոշ նեյրոակտիվ միացությունների հավանական հակաօքսիդանտային ազդեցությունները այդ պրոցեսներում:</p>	<p>Հետազոտությունները անցակցվելու են Իզմիրյան հիվանդանոցի հետ համատեղ: Իրականացվելու են հյուսվածքներում և լիպոսոմներում ՈՒՄ ճառագայթների և էլեկտրական հոսանքի ազդեցության ժամանակ դիտվող թաղանթային լիպիդների գերօքսիդային օքսիդացման պրոցեսների պարզաբանմանը ուղղված ուսումնասիրությունները:</p>	<p>Պլազմիդների ստացման, լիպոսոմների ստացման հակաօքսիդանտային ակտիվության որոշման անալիտիկ սպեկտրալ մեթոդներ</p>	<p>Ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն կտան և էպիլեպսիայի դեպքում SkQ1-ը որպես կանխարգելիչ ու բուժիչ միջոց օգտագործելու համար:</p>	4-րդ եռամսյակ	12000.0
Ընդամենը						155998.9

Տնօրեն



(Սամվել Չախյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(Սամվել Չախյան)

